ԴՊՐՈՑԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԸ XIX ԴԱՐԻ ՀԱՅ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ

Ա. Խ. ԲՐՈՒՏՅԱՆ

Դպրոցը՝ իբրև ազգապահպան լուրջ գործոն, բոլոր ժամանակներում եղել է հայ հասարակության և հատկապես մտավորականների ուշադրության կենտրոնում: XIX դարի երկրորդ կեսի արևելահայ իրականության մեջ նկատելի երևույթներից էր դպրոցաշինությունը, առհասարակ կրթական գործի աշխուժացումը: Ռուսական և արևմտաեվրոպական մանկավարժության ազդեցությամբ ու փորձով զարգացման իր հունն էր ակոսում նաև հայ մանկավարժությունը:

Հայ դպրոցի և մանկավարժական մտքի զարգացման խնդիրներին վերաբերող բազմաթիվ հարցեր առանձնակի կարևորություն էին ստանում մամուլի օրգաններում, հատկապես մանկավարժական պարբերականներում: «Հայկական աշխարհ» ամսագիրը, օրինակ, կրթությանը հասարակական լուրջ գործոնի դեր էր հատկացնում, ինչն արտահայտվում էր տարբեր հեղինակների և խմբագրի ստորագրությամբ հրապարակված բազմաթիվ այն հոդվածների միջոցով, որ զետեղվում էին պարբերականի էջերում: 1870 թ. մարտին Վենետիկից «Հայկական աշխարհ»-ին ուղարկած «Հասարակական կրթություն» թղթակցության մեջ Գրիգոր Արծրունին, հասարակությունը բնորոշելով որպես «օրգանական մի կազմվածք», գտնում էր, որ համապատասխանաբար հասարակական կրթությունը ևս պետք է օրգանական կերպով զարգանա: Եվ քանի որ գնալով մեծանում էր հասարակական կյանքում ժողովրդի բոլոր տարրերի, գործիչների մասնակցության պահանջը, ուստի անհրաժեշտ էր համարում «ժողովրդի նյութական աշխատանքին նուիրուած դասին մէջ ևս կրթութիւն տարածելը»[1]: Դա հիմնավորում էր հասարակության բոլոր անդամների համար առկա պահանջով: «Այժմեան հասարկութիւնը,- գրում էր Արծրունին,- պահանջում է անհատի համար (ինչ դասին և նա պատկանէր) հաւասարութիւն գիտութեան և պետութեան առաջ, հաւասարութիւն թէ գիտնական, թէ քաղաքական օրէնքի առաջ»[2]: Նա նաև որպես պահանջ համարձակորեն առաջադրում էր ազգի բոլոր մանուկների համար ապահովել ձրի և պարտադիր դաստիարակություն և ուսուցում, ինչը կխթաներ ապագա քաղաքացու ձևավորման ջանքերն ու ձգտումները: Արծրունին սկզբնական ժողովրդական կրթությունը կարևորում էր իբրև հասարակական կրթության հիմք: Այդուհանդերձ, նա հասարակական կյանքին մասնակցելու և լիարժեք քաղաքացի լինելու, ինչպես նաև հասարակության մեջ անընդհատ ծնվող նոր մտքերն ու գաղափարները, հասարակական հարցերը հասկանալու կամ «իւր դասի և իւր անձի օգուտները պաշտպանելու» համար այն բավարար չէր համարում և ընդգծում էր ժողովրդական բոլոր խավերի համար ընդհանուր կրթության անհրաժեշտությունը:

Ազգի առաջադիմության և պահպանության խնդրում կարևորելով ուսման դերը՝ «Հայկական աշխարհ» պարբերականն ընդգծում էր նաև կանանց կանոնավոր

[1] «Հայկական աշխարհ», 1870, թիվ 1, էջ 146:
[2] Նույն տեղում, էջ 147:

կրթության անհրաժեշտությունը. «Մենք պիտի աշխատենք ամեն կերպով ուսում տարածել, ուսումը պիտի փրկէ մեզ: Մանաւանդ պիտի աշխատենք օրիորդներ կրթել. բայց անբաղդաբար սորա մասին սակաւ ենք մտածում»[3]:

Կրթության՝ իբրև անձի ձևավորման, հասարակական կյանքում նրա դերակատարման կարևոր գործընթացի խնդիրները տարբեր տեսանկյուններով դիտարկում էր նաև «Դպրոց» պարբերականը: Ուշագրավ է Ղ. Աղայանի տված այն գնահատականը, ըստ որի՝ «Կրթել և զարգացնել միևնույն նշանակութիւնը ունին, որոնք չեն նշանակել ո՛չ ուսուցանել և ո՛չ մարզել, այլ թէ՛ ուսուցանելուն և թէ՛ մարզելուն տալ այնպիսի ձև, որ նոքա լինին կրթողական, զարգացուցիչ»[4]: Դպրոցի, մասնավորապես ժողովրդական դպրոցի առաջադիմությունը և արդյունավետությունը պարբերականը կարևորում էր հատկապես բարեկարգ «վարժապետանոցների» առկայությամբ: Գտնելով, որ միայն բարձրագույն դպրոցի տիպ համարվող կանոնավոր վարժապետանոցներում ուսում առած անձինք կարող են լինել արդյունավոր վարժապետներ ժողովրդական դպրոցում՝ ամսագիրը վկայակոչում էր Գերմանիայի, Անգլիայի, ինչպես նաև ԱՄՆ-ի օրինակները[5]:

XIX դարի 80-ական թվականներին հայ մանկավարժական միտքն արդեն զարգացման որոշակի փուլում էր: Ի տարբերություն մասնագիտական և ոչ մասնագիտական այլ պարբերականների՝ «Մանկավարժանոց» ամսագիրը փորձում էր բացահայտել՝ մանկավարժությունը գիտությո՞ւն է, թե՞ արհեստ, ուստի գրում էր. «Գիտութիւնը ուսումնասիրում է միայն ինչ որ կայ կամ եղած է. իսկ արհեստը ձրգտում է ստեղծել այն, ինչ որ դեռ ևս չկայ, և ապագայի մէջ է տեսնում իր ստեղծման նպատակը և կատարելատիպը»[6]: Ելնելով դրանից՝ պարբերականը եզրահանգում էր, որ մանկավարժությունը, ինչպես և քաղաքականությունը և բժշկությունը, չի կարելի գիտություն անվանել, այն «կրթության պահեստ» է: Պարբերականը հաճախ էր հարցադրումներ անում և ակնկալում պատասխաններ, որոնք կարող էին ուղեցույց լինել հատկապես ոչ փորձառու ուսուցիչների համար: Իր իսկ հնչեցրած հռետորական այն հարցին՝ արդյո՞ք մանկավարժը պետք է ուսումնասիրի առկա բազմազան ու ընդգրկուն գիտությունները՝ նախքան կսկսեր բուն մանկավարժությունը՝ իբրև մանկավարժական գործունեության կանոնների ժողովածու, «Մանկավարժանոցը» տվել է հաստատակամ պատասխան. «Եթէ մանկավարժութիւնը կամենում է դաստիարակել մարդին ամեն կողմից, ուրեմն նա պիտի յառաջագոյն ճանաչէ նորան նոյնպէս ամեն կողմից»[7]: Ընթերցողի հնարավոր տարակուսանքը փարատելու համար պարբերականը հայ իրականության մեջ նման մանկավարժների բացակայությունը հիմնավորում էր մանկավարժության՝ իբրև գիտության նոր-նոր ձևավորմամբ:

Դպրոցական կրթության և դաստիարակության հաջողությունը նաև ուսուցման ճիշտ մեթոդների ներդրման ու բարեխիղճ կիրառման արդյունք է: Ուշիուշով հետևելով այդ գործընթացներին՝ մանկավարժական պարբերականները, սակայն, արձանագրում էին դրանցում տեղ գտած փաստեր, որոնք հակասում էին հայ նոր մանկավարժության մեջ հիմնավորվող այլ սկզբունքների: Մանկավարժ հրապարակախոսները հատկապես դեմ էին արտահայտվում դպրոցում գործադրվող ֆիզիկական պատիժներին, մասնավորապես ծեծին:

---

[3] Նույն տեղում, 1869, թիվ 3, էջ 100:

[4] «Դպրոց», 1874, թիվ 2, էջ 68:

[5] Տե՛ս նույն տեղը, 1874, թիվ 1, էջ 89:

[6] «Մանկավարժանոց», 1884, մարտ, թիվ 1, էջ 9:

[7] Նույն տեղում, էջ 11:

Գաղտնիք չէ, որ կրթական գործի հաջողությունը մեծապես պայմանվորված է նաև ուսումնական առարկաների և դասագրքերի ճիշտ ընտրությամբ և անհրաժեշտ մակարդակի ապահովմամբ: Հասարակության առաջադիմության գործում կարևորելով կրթօջախների և կրթության դերը՝ մանկավարժական պարբերականները բազմիցս քննարկել են նոր դպրոցի ոգուն համապատասխանող, մանկավարժության պահանջները բավարարող ուսումնական ձեռնարկների ու դասագրքերի, առարկաների ուսուցման նոր ձևերի ու մեթոդների ներդրման հարցեր: Այդ քննարկումները հարթ ու անաղմուկ չեն եղել, հաճախ ընթացել են բուռն բանավեճերի մթնոլորտում: Հասարակական-քաղաքական կյանքի աստիճանաբար փոփոխվող պայմաններում լուրջ նշանակություն էր ձեռք բերում բնական գիտությունների զարգացումը, ինչը և նկատի ունենալով՝ առաջադեմ մանկավարժները կարևորում էին բնագիտական առարկաների դասավանդումը դպրոցում:

Դասագրքի ուսումնադաստիարակչական նշանակությանը հետևողականորեն անդրադարձել է «Դպրոց» ամսագիրը: Պարբերականը նշում էր, որ նախկինում մանուկների մտավոր զարգացման գործում հիմնական ծանրությունը աշակերտի վրա էր, իսկ վարժապետը իրավունք ուներ բավարարվել կա՛մ թերի բացատրություններով, կա՛մ այստեղից-այնտեղից քաղած տեղեկություններով ու խոսքերով, ուստի դասագիրքը հարկավոր էր համարվում միայն աշակերտի համար: Մինչդեռ վարժապետի համար նույնիսկ անպատվություն էր դասագիրք նայելը: Հետո իրավիճակը փոխվեց, առաջ եկավ այլ վերաբերմունք. դասագիրքը անհրաժեշտ համարվեց միայն վարժապետի համար: Սկսեցին հրատարակվել դասագրքեր, որոնցով պետք է առաջնորդվեին ուսուցիչները՝ առանց դրանցից շեղվելու: Դրա հետևանքները, ըստ պարբերականի, ավելի վնասակար էին, քան թե օգտակար, որովհետև «սկսեցին բթամտանալ վարժապետները, նոքա սկսեցին կորցնել ընդունակութիւնը՝ ազատութեամբ կատարել պաշտօնը, օգուտ քաղել փորձից և մշակել առանձին սեփական եղանակ դասատվութեան յարմար իւրաքանչիւր աշակերտի կամ գոնէ ամբողջ դասատան մտաւոր զարգացման և ընդունակութեան»[8]: «Դպրոցի» համոզմամբ՝ նոր ժամանակներում դասագրքի նշանակության վերաբերյալ ձևավորվել է նոր՝ ավելի հիմնավոր և ճշմարիտ գաղափար: Դասագիրքն արդեն ընդունվում է որպես ամենահարկավոր բանը թե՛ ուսուցչի և թե՛ աշակերտի համար: «Վարժապետի համար դասագիրքը պիտի լինի **առաջնորդ, ուղեցոյց, օգնական դասատվութեան եղանակի կողմից**, աշակերտի համար դասագիրքը պիտի լինի **առաջնորդող, ուղեցոյց, օգնական դաս պատրաստելու կողմից**»[9]**:** Պարբերականը գրում էր, որ դասագիրքն այնպիսին պետք է լինի, որ աշակերտն այն ձեռքն առնելիս ոչ թե ատելություն ու զզվանք զգա դրա հանդեպ, այլ սեր ու ձգտում դեպի պարապմունքը, այն ամբողջությամբ կարդալու հետաքրքրություն: Անժխտելի է պարբերականում տպագրված այն միտքը, ըստ որի՝ «Մի լաւ դասագիրքը աւելի շատ արդիւնքներ կարող է տալ, քան թէ տասը լաւ վարժապետները, որովհետև տասը վարժապետները կարող են ուսուցանել միայն տասը ուսումնարանի մէջ, իսկ մի լաւ դասագիրքը կարող է անցնիլ հարիւրաւոր վարժապետների և հազարաւոր աշակերտների ձեռով»[10]: Հայ ուսումնարանները, ըստ ամսագրի, խիստ պակասություն ունեին հատկապես ազգային լեզվի, ազգային պատմության և կրոնագիտության դասագրքերի: Եվ քանի որ «Դպրոցը» իր կարևորագույն խնդիրներից էր

[8] Տե՛ս «Դպրոց», 1874, թիվ 1, էջ 21:

[9] Նույն տեղում:

[10] Նույն տեղում, էջ 23:

համարում դասագրքի հարցը, ուստի խնդրում էր հեղինակներին դասագիրք հրատարակելու դեպքում մեկ օրինակ ուղարկել խմբագրություն՝ հասարակությանը դրա մասին ծանուցելու նպատակով: Ամսագիրը պարբերաբար ներկայացնում էր գրախոսականներ նորահրատ դասագրքերի կամ ուսումնական ձեռնարկների մասին, որոշակի գնահատական տալիս դրանց նշանակությանը: Այսպես, «Դասագիրք բաղդատական աշխարհագրութեան» գրախոսականով անդրադառնալով Պետերբուրգի հայ ուսանողների հեղինակած գրքին, որը տպագրվել էր 1873 թ. Վաղարշապատի Ս. Էջմիածնի տպարանում, պարբերականը ցանկացած տիպի գրքի և մանավանդ դասագրքի հեղինակի համար կարևորում էր «ազնիւ ցանկութիւնը տարածել իւր շարադրութեան մէջ ամփոփուած իմաստները իւրեանց ճիշտ նշանակութեամբ համոզուած լինելով նոցա պիտանիաւորութեան մէջ»[11]: Գրախոսելով դասագիրքը՝ պարբերականի խմբագրությունը քննադատում էր այն՝ անհետաքրքիր շարադրանքի և հատուկ անուններով գերբեռնվածության համար: Քննադատության սայրն ուղղված էր հատկապես բովանդակային կողմին. ո՞ւմ համար է ստեղծվել 264 էջանոց այս դասագիրքը, եթե հայ աշակերտների համար, ապա ո՞ւր է Հայաստանի աշխարհագրությունը, որին հատկացված է ընդամենը **ութ** տող[12]: Դասագրքի ստեղծման գործում «Դպրոցը» կարևորում էր գրքի լեզուն և ոճը և խնդրանքով դիմում հեղինակներին՝ ուշադրության կենտրոնում պահել այդ խնդիրը նաև այն պատճառով, որ «Մեր նոր լեզուն մի կողմից սկսում է համարեա բոլորովին արտաքսել գործադրութիւնից հին, թէպէտ շատ հարուստ, բայց այժմ բազմութեան համար անհասկանալի գրոց ոճը, միւս կողմից ինքն զարգանում է և մշակվում է շատ դանդաղ կերպով»[13]:

Կրթության կազմակերպման գործում դասագրքից պակաս նշանակություն չունի նաև առարկայական ծրագիրը: Ի՞նչ ուսումնական առարկաներ պետք է ուսուցանվեն հայ ուսումնարաններում, ինչպե՞ս պետք է կազմակերպել դրանց դասավանդումը. հանգամանորեն քննարկելով այս հարցերը՝ «Վարժարան» ամսագիրը մատնանշում էր հանրակրթական ուսումնական առանձին առարկաների տեղն ու նշանակությունը դպրոցում: Ամսագիրը բնական էր համարում, որ յուրաքանչյուր ազգի զավակ պետք է կրթվի, դաստիարակվի նախ իր մայրենի լեզվով: Երեխան ծնվում և զարգանում է սոցիալական որոշակի միջավայրում, որտեղ և ձևավորվում է նրա հոգեկան աշխարհը, անհատականությունը: Այդպիսին է նա մտնում դպրոց: Պարբերականը հարց էր բարձրացնում. մի՞թե հնարավոր է այդ երեխայի կրթությունն սկսել ոչ իր բնական, հարազատ մայրենի լեզվով, այլ նրան անծանոթ մի օտար լեզվով: Եվ տալիս էր աներկբա պատասխանը. այդպես վարվել նշանակում է սպանել մանկան միտքը, աշխուժությունը, արհեստականորեն խոչընդոտել նրա առաջադիմությանը: Ամենևին չանտեսելով այլ լեզուների, հատկապես ռուսերենի ուսուցման նշանակությունը՝ ամսագիրն այնուամենայնիվ այն համոզմանն էր, որ մնացած բոլոր լեզուները պետք է սովորել մայրենին յուրացնելուց հետո: Իսկ ինչպե՞ս պետք է ընթանա հայոց լեզվի սկզբնական գրագիտության ուսուցումը: Ահա այս խնդրի շուրջ «Վարժարանի» էջերում լուրջ բանավեճ է ծավալվել Սեդրակ Մանդինյանի և Ղազարոս Աղայանի միջև: Աղայանը կողմնակից էր գրագիտության ուսուցման գործում հնչական մեթոդի գործադրմանը, իսկ Մանդինյանը մերժում էր այն, հատկապես «**ը**» հնչյունի առումով: Այդուհանդերձ, Մանդինյանն

[11] Նույն տեղում, 1874, թիվ 2, էջ 102:
[12] Տե՛ս նույն տեղը, էջ 105:
[13] Նույն տեղում, էջ 107:

ընդունում էր Աղայանի՝ մայրենի լեզվի դասագրքերի բարձրարժեք լինելը՝ հատկապես դրանց մատչելի և հաճելի բովանդակության, կենդանի լեզվով ընթերցանության նյութերի համար: Այդ մասին նա անկեղծորեն գրել է պատասխան հոդվածներում և Աղայանին բնութագրել որպես շնորհալի մանկագրի:

Քննարկվող հիմնահարցերի շուրջ ծավալված բանավեճին մասնակցել և «Վարժարանի» էջերում իր դիրքորոշումն է ներկայացրել նաև երախտաշատ մանկավարժ Առաքել Բահաթրյանը: Նա երեխաների դաստիարակության գործում նախապատվությունը տալիս էր հատկապես գերմանական հեքիաթների՝ որպես ընթերցանության նյութի ներկայացմանը դասագրքերում: Մանդինյանը համառորեն այն դիրքորոշմանն էր, որ մայրենի լեզվի դասագրքերը պետք է բովանդակեն բացառապես հայրենի գրականությունից և բանահյուսությունից վերցված նյութեր՝ որպես հայ երեխայի ըմբռնողությանը և հոգուն հարազատ ստեղծագործություններ: Տարրական դպրոցում մայրենի լեզվից հետո ամենագլխավոր ուսումնական առարկան, ըստ Մանդինյանի, թվաբանությունն է, որը պետք է ոչ միայն մարզի աշակերտների միտքը, զարգացնի նրանց դատողությունը, այլև նպաստի առօրյա կյանքում գործնական հաշվումներ կատարելուն: Մանկավարժ-հրապարակախոսին անհանգստացնում էր նաև հայկական դպրոցներում ռուսերենի դասավանդման անմխիթար վիճակը:

Կրթության ու դաստիարակության գործում «Վարժարանը» էական դեր էր վերապահում հայ ժողովրդի պատմության ուսուցմանը, լեզվից և կրոնից հետո կարևոր նշանակություն էր տալիս ազգային պատմության դասավանդման խնդրին, որը, ըստ պարբերականի, դեռևս «այն դիրքը չունի մեր ուսումնարաններում, որ ժամանակը եւ կրթութեան պայմանները պահանջում են»[14]: Այս առումով Առաքել Բահաթրյանն ազգային դպրոցներում պատմությունը դասավանդելու համար առաջադրում էր ուսուցման նոր մեթոդներ, որոնց մասին հանգամանորեն խոսել է «Թե ինչպէս պիտի ուսուցանուի պատմութիւնը մեր ազգային դպրոցներում»[15] հոդվածում, որը շարունակաբար տպագրվել է ամսագրի մի քանի համարներում:

XIX դարի 70-80-ական թվականներին, երբ կարճատև ընթացքով իրար հետևից հրապարակ էին իջնում մանկավարժական պարբերականները, արևելահայ մտավորական կյանքի զարգացումը խոչընդոտվում էր ցարական կառավարության կողմից ուղղակիորեն և անուղղակիորեն ձեռնարկվող տարբեր միջոցներով: Դա արտահայտվում էր նաև ցարիզմի կողմից փոքր ազգությունների ռուսացման՝ նրբորեն քողարկված քաղաքականությամբ: Վտանգավոր այդ երևույթը կանխելու առաջին պայմաններից մեկը հայ մտավորականները իրավացիորեն համարում էին հայկական դպրոցների պահպանումը և դրանցում ազգային ոգին արթուն պահելու գործոնը հատկապես հայերենի և հայրենագիտական առարկաների ուսուցման միջոցով: Այս նկատառումով մամուլում և առաջին հերթին մանկավարժական պարբերականներում աճում էր հրապարակախոսական հրապարակումների թիվը: «Դպրոց» պարբերականի էջերում ազգային գաղափարախոսությունը մեկտեղվում էր ազգային դպրոցի առաջադիմության գաղափարի հետ: «Մենք ամենքս սիրում ենք մեր հայրենիքը, մեր լեզուն, մեր սուրբ եկեղեցին - այս **ազգութեան երրորդութիւնը:** Եւ արդարև այս ազգութեան երրորդութեան մէջ է ազգի բոլոր կեանքը. նորա - ազգութեան երրորդութեան – կեանքը մեր կեանքն է, նորա երջանկութիւնը մեր երջանկութիւնն է, նորա փառքն մեր փառքն է, նորա զօրութիւնը մեր զօրութիւնն է, նորա հարստութիւնը մեր հարստութիւնն է. նոյնպէս՝ նորա թշուառութիւնը

[14] «Վարժարան», 1882, թիվ 3, էջ 20:

[15] Նույն տեղում, 1883, թիվ 7, էջ 23:

ազգի թշուառութիւնն է, անոր մահը ազգի մահն է: Բայց ազգութեան երրորդութեան զարգացման և հաստատութեան համար ամենից առաջ հարկաւոր է լոյս, հարկաւոր է ազգային դպրոց – կանոնաւոր դպրոց, լուսաւորող դպրոց, ազգային բարոյութիւնը ծնանող և ապահովացնող դպրոց»[16]:

Հայ պարբերական մամուլի էջերում քննարկվող կարևորագույն թեմաների շարքում մշտապես արծարծվել են կրթական հիմնահարցերը: XIX դարի 60-ական թվականներից հրապարակ իջնող մանկավարժական պարբերականները հանդես էին գալիս ոչ միայն իբրև տվյալ ժամանակաշրջանում առկա մասնագիտական հիմնախնդիրները վեր հանող ու լուսաբանող օրգաններ, այլև որպես հրապարակային ամբիոն փորձում էին աջակցել հայ կրթական գործի կազմակերպմանը, իրենց էջերը տրամադրում էին մանկավարժներին ու հասարակական գործիչներին՝ անդրադառնալու առհասարակ լուսավորության և հատկապես մանկավարժության հիմնախնդիրներին:

А. Х. БРУТЯН — ***Вопросы школы и образования на страницах армянской педагогической печати XIX века.*** — Национальная школа во все времена была одним из важнейших залогов самоопределения и самосознания армянского народа. Периодическая печать, особенно педагогические издания, выходившие в свет начиная со второй половины XIX века, сыграли большую роль в деле широкого освещения и обсуждения многочисленных и многогранных вопросов школьного образования и воспитания. Периодические издания стали трибуной для педагогов и общественных деятелей, представлявших свои суждения и предложения по актуальным проблемам образования.

[16] «Դպրոց», 1876, թիվ, էջ 14: